

տամբք եւ տեղեօք, սրղւովք եւ դստերօք, դար-
մօք եւ զաւակօք, ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ
վաստակօք, այգեստանօք, եւ բուրաստանօք, սի-
րելեօք եւ բարեկամօք, կենդանեօք եւ ննջեցե-
լովք, առօք եւ տրօք, եւ ամենայն գոյականօք
ամէն: Եւ ընդ աստուածապարգեւ տեառնաղեղուն
օրհնութեան նամակաւս՝ ծանուցումն լիցի հոգեւոր
որդեկացդ մերոյ՝ եւ լուսածնունդ զաւակացդ մօրս
հաւատոյ սուրբ Էջմիածնի. քանզի ասէ փրկիչն
մեր, թէ Որ խնդրէ առնու: Արդ եւ զի զՎաղար
Վարդապետն. առաջնորդն ձեր՝ առաքեալ էիք առ
մեզ՝ հանդերձ բազմակնիք մահօտիւ եւ վկայա-
կան թղթով ձերով, որք եւ խնդրեալ էիք բաղմօք
աղաչանօք զի զնա եպիսկոպոս արարեալ ձեզ՝
յղէաք առ ձեզ, վասն որոյ կամեցաք զանդրուածս
ձեր կատարել եւ մեք այժմ, բայց՝ արգելեցաք.
վասն զի՝ թէպէտ ունէր առ ինքն զհամահաւա-
նական եւ զվկայական թուղթն ի ձէնջ, սակայն ի
սիրելի եղբօրէ մերմէ, եւ ի հոգեւոր Հօրմէ իւրմէ
Յովհաննիսէ Վարդապետէ՝ Պատրիարքէն Բիւզան-
դիոյ՝ ոչ ունէր ընդ ինքեան զվկայական թուղթ:
Իսկ այժմ, իբրեւ եհաս առ մեզ եւ ի նմանէ
թուղթ վկայական՝ զի ձեռնադրեսցուք զսա ձեզ
եպիսկոպոս: Սակս որոյ ես հոգեւոր հայրս ձեր՝
լուայ աղաչանաց ձերոյ բարեխնդիր որդեկացդ
իմոյ. եւ ըստ խնդրոյ Պատրիարգ Վարդապետին,
եւ ըստ վկայութեան անձին իւրոյ, յոգնախումբ
հանդիսիւք եւ բազմահաւաք ժողովրդովք յԱս-
տուածանջ եւ ի շնորհատու Աթոռոջս, եւ շնոր-
հօք ամենասուրբ Հօգւոյն Աստուծոյ, եւ հայրա-
պետական իշխանութեամբ իմով տալ դմա, զի
նորօք զվանքն ձեր շէն եւ պայծառ պահեսցէ որ է
հօգւոյ ձերոյ յատկապէս տուն: Մի ոք յան-
դգնեալ ձեռնամուխ լինիցի յառաջնորդական ար-
գիւնսն, եւ կամ հատցէ եւ կամ ներհակեսցէ
առաջնորդիդ ձերոյ, եւ կամ վնաս ինչ հասուցէ